ԵՐԵՎԱՆԻ ՔԱՂԱՔԱՊԵՏԱՐԱՆԸ ՀԱՅՏԱՐԱՐՈՒՄ Է

ՀԱՅԱՍՏԱՆԻ ԱԶԳԱՅԻՆ ՀԵՐՈՍ
ԿԱՐԵՆ ԴԵՄԻՐՃՅԱՆԻ ՀԻՇԱՏԱԿԸ ՀԱՎԵՐԺԱՅՆՈՂ ՀՈՒՇԱՐՁԱՆ–ԿՈԹՈՂԻ
ԲԱՑ ՄՐՑՈՒՅԹԻ ՆՈՐ ՓՈՒԼ

Մ Ր Ց Ո Ւ Յ Թ Ի Պ Ա Յ Մ Ա Ն Ն Ե Ր Ը

- Հուշարձանի տեղադրումը նախատեսվում է Կարեն Դեմիրճյանի պողոտայի՝ «Մալիբու» գործող սրճարանի և Մաշտոցի պողոտայի միջև ընկած հատվածում։
- Առանձնացված հողատարածքի սահմանները նշված են Գլխավոր պողոտայի հատակագծում։
- Հուշարձանի տեղադրման համար հատկացվող հողատարածքը չպետք է գերազանցի 30.0 քմ։
- Իր գեղարվեստական միջոցներով հուշարձանը պետք է մարմնավորի պետական գործչի կերպարը։
- Հուշարձանի դիրքը, գաղափարական հորինվածքը, չափերը և նյութի ընտրությունը թողնվում են հեղինակի հայեցողությանը։
- Հուշարձանի դիրքը պետք է ապահովի լավագույն դիտակետեր և նպաստի տարածության մեջ՝ մասշտաբի առումով ճիշտ ընկալմանը։

ՄՐՑՈՒԹԱՅԻՆ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎԻՆ ՆԵՐԿԱՅԱՑՎՈՂ ՊԱՐՏԱԴԻՐ ՆՅՈՒԹԵՐՆ ԵՆ.

- Տարածքի գլխավոր հատակագիծը Մ 1:500,
- Ճարտարապետական փռվածքները, հուշարձանի մասշտաբը, ձևը և նյութը արտահայտող գծագրերը Մ 1:50,
- Հուշարձանի մանրակերտը Մ 1:10,
- Դիմաքանդակը,
- Բացատրագիրը / 2 օրինակից /։

Անհրաժեշտության դեպքում կարելի է ներկայացնել առաջարկը պարզաբանող լրացուցիչ նյութեր:

Ընտրված լավագույն աշխատանքները պարգևատրվում են հետևյալ մրցանակներով՝

- Առաջին մրցանակ – 400000 դրամ:
- Երկրորդ մրցանակ – 200000 դրամ:
- Երրորդ մրցանակ – 100000 դրամ:

Մրցանակային ֆոնդը կազմում է 700000 դրամ:

Լրացուցիչ պայմաններ

Գծագրերի աջ կողմի վերևի անկյունում վեցանիշ թվով նշվում է նախագծի ծածկագիրը, շրիֆտի բարձրությունը՝ 15մմ:
Մրցութային առաջարկությունները ներկայացվում են ոչ ուշ, քան 2012թ. ապրիլի 26–ը հետևյալ հասցեով՝ *փող. Աբովյան, Հայաստանի նկարիչների միություն, 1–ին հարկ*:
Գործը ներկայացնելիս փակ ծրարի մեջ համապատասխան ծածկագրով ներկայացվում է հեղինակը կամ հեղինակային կազմը: Փակ ծրարը հանձնվում է Երևանի քաղաքապետարան՝ Արգիշտի փողոց N1, 2-րդ հարկ:

Ծանոթություն

Նշված պարտադիր նյութերից շեղումների դեպքում աշխատանքը չի դիտարկվում մրցութային հանձնաժողովի կողմից :
Մանրամասների համար այցելեք Երևանի քաղաքապետարանի www.yerevan.am պաշտոնական կայք:











ՈՐՈՇՈՒՄ ԿԱՌՈՒՑՈՒՄՆԵՐԻ ԶՈՒՅԳՈՐԾՈՒՄՈՎ ՀՈՂՈՒՄ ՊՈՂՈՅՆՈՒՄՆԵՐԻ ՎՆԱՍԱԿԻ-ՊՈՇՈՒՄՆԵՐԻ ՆԱՊՑՈՒՐՅԱՐԻՈՒ ԾԻՈՒՏՈՂՎԵ ԿՊՈՒԵՑՅԱՎՈՒՆ ՊԵՅՈԻ ՈՍԱՅԵ ՊՎԵՈԻԵՑՈ ԿՊՈՒՏՈՈԵՈՒ